ԿԱՐԾԻՔ

Ամալյա Գրիշայի Սահակյանի «**Կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացումը նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ**» խորագրով ատենախոսության վերաբերյալ ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Մանկավարժական կրթության մարդասիրական միտվածության ու ժողովրդավարացման պայմաններում առանձնահատուկ արդիականություն ունի սրանում կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացման հիմնախնդիրը:

Այս պատասխանատու և պատվավոր խնդիրը կոչված են կատարելու թե ընտանիքը, թե հանրակրթական դպրոցը, թե հասարակական համապատասխան կառույցները: Սակայն այդ հարցում իր առանձնահատուկ անելիքներն ունի միջնակարգ դպրոցն իր կառուցվածքային համակարգերով ու ենթահամակարգերով:

Հատուկ գիտակցելով այս ամենը գործող մանկավարժ Ամալյա Սահակյանը շնորհակալ և ընդհանուր առմամբ հաջողված նախաձեռնություն է ցուցաբերել փորձելով «նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ» հետազոտական աշխատանքի հիման վրա վերլուծել և գիտականորեն համակարգել է մանկավարժական այն պայմանները, որոնք անհրաժեշտ են կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացման, նրանց ուսումնահմացական գործունեության ակտիվացման համար:

Հետազոտության ներածականում հակիրճ, բայց բավականին բովանդակալից ձևով բնութագրելով հիմնահարցի ուսումնասիրության աստիճանը, ատենախոսության հեղինակը գիտականորեն համոզիչ դիրքերից արժեքավորում է

այդ բնագավառում կատարված աշխատանքները, գնահատում դրականը, մատնանշում թերություններն ու բացերը:

Բնութագրելով իր հետազոտության օբյեկտը, առարկան, հեղինակը իր աշխատանքի գլխավոր նպատակին համապատասխան սահմանում է նրա բովանդակությունը կազմող հիմնական խնդիրները և շարադրում կատարված աշխատանքի հիմնական ուղղությունները, որոնց օգնությամբ նա փորձել է լուծել իր առջև դրված գիտական խնդիրները:

Հետազոտության հիմնահարցի ուսումնասիրվածության վիճակից, նպատակից և խնդիրներից բխեցվել են թեզի գիտական վարկածը, որոշվել մեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդաբանական համակարգը: Հաջողվել է գիտականորեն համոզիչ կերպով ներկայացնել իր հետազոտության գիտատեսական նորույթը, գործնական նշանակությունը, ցուցադրել դրանց հիմնադրույթների հիմնավորվածությունն ու հավաստիությունը:

Հետազոտության նպատակները, խնդիրները, վարկածը իրենց համոզիչ բնութագրումն են ստացել պաշտպանության առաջադրվող դրույթների համակարգում:

Ատենախոսության հեղինակը իր առաջադիր նպատակն ու խնդիրները հետազոտում է երեքական ենթագլուխներից բաղկացած երկու գլուխներում, որոնցից յուրաքանչյուրն ավարտվում է համապատասխան եզրակացություններով:

Շուրջ 151 էջ պարունակող աշխատանքն ունի ընդհանուր եզրափակում, 176 անուն ընդգրկող մատենագրական ցանկ:

Սեղմագիրը լիովին համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը: Աշխատության առաջին գլխում, որը կրում է «Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման հիմնախնդրի գիտատեսական հիմնավորումը» խորագիրը, հեղինակը սահմանում է հետազոտության գիտական ապարատը, քննության առնում կրտսեր դպրոցականի ուսումնահմացական գործունեության առանձնահատկությունները և նրանց իմացական,

ստեղծագործական կարողությունների ակտիվ ձևավորման հոգեբանամանկավարժական պայմանները:

Այս գլխի արժանիքներից հարկ է նշել այն, որ հեղինակը բավականին հաջող փորձ է կատարել ճշգրտելու ստեղծագործական կարողություններ, ստեղծագործական ընդունակություններ, ստեղծագործական մտածողություն հասկացությունների տարբմբռնումները, բացահայտելով դրանց հիմնական բաղադրիչները՝ ամբողջական կառուցվածքային, ամբողջական գործառնական, ամբողջական ինտեգրատիվ և ամբողջական ճշգրտող, սահմանելով դրանց փոխադարձ կապը:

Մանկավարժական առաջավոր ու իր սեփական փորձի և փորձառական հետազոտությունների հիման վրա հեղինակին հաջողվել է մշակել կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստող նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներ:

Ատենախոսության «Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետության հիմնավորմանն ուղղված հետազոտության արդյունքների վերլուծությունը», խորագիրը կրող երկրորդ գլխում քննության են ենթարկված կրտսեր դպրոցականի իմացական գործունեության կառավարման հոգեբանամանկավարժական հիմունքները, մանկավարժական տեսանկյունը և մեթոդական կառավարման վերաբերյալ հարցերը: Հեղինակը այս գլխում հիմք ընդունելով գիտական այն հիմնադրույթը, որ ուսուցման գործընթացը կառուցելիս անհրաժեշտ է հիմքում ունենալ գերազանցապես նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների և նրա ծրագրավորման պահանջները:

Տարբերակելով նորագույն տեխնոլոգիաներ և փոխներգործուն մեթոդներ հասկացությունները հեղինակը վերլուծաբար, գեղարվեստական գործունեությունից բերված օրինակների հիման վրա կարողանում է ապացուցել, որ ուսուցման գործընթացը ընթանում է օբյեկտիվ /տրամաբանական և իմացաբանական/ և

սուբյեկտիվ /հոգեբանամանկավարժական/ գործոնների սերտ փոխազդեցության պայմաններում:

Ուստի կրտսեր դպրոցականի ուսուցման գործընթացի և դրանում նրանց ստեղծագործական կարողությունների զարգացման հիմքում պետք է դնել նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների, ինչպես նաև հոգեբանամանկավարժական /տարիքային, անհատական և այլ առանձնահատկությունների հաշվառում/ գործոններ:

Համոզիչ վերլուծությունների և քննարկումների օգնությամբ հեղինակը հանգում է գիտական այն ճիշտ եզրակացությունների, որ կրտսեր դպրոցականների հոգեբանական նախապատրաստվածությունը ակտիվ ստեղծագործական գործունեության կարող է իրագործվել նրանց ճանաչողական պահանջմունքների ու հետաքրքրությունների ըստ ամենայնի զարգացման, ուսման դրական դրդապատճառների ձևավորման, դպրոցականների անձնական փորձի օգտագործման, ուսումնական նյութերի ուսումնասիրման գործնական նշանակության ցուցադրման, գիտելիքների կենսական նշանակության բացահայտման, նրանց հույզերի և զգացմունքների վրա ներգործմամբ նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ: Այս բոլորի կենսագործման համար հեղինակը 1–4 դասարաններում գեղարվեստական գործունեության օրինակով առաջարկում է իր մշակած կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացման արդյունավետ պայմանների մի համակարգ, որի ընդհանուր դրույթները մեր կարծիքով կարող են նպաստել ոչ միայն կրտսեր դպրոցականների գեղարվեստական գործունեությանը, այլև այլ տարիքի սովորողների և մյուս առարկաների դասավանդման ընթացքում ուսուցման և ստեղծագործական կարողությունների զարգացման գործընթացի ըստ ամենայնի ակտիվացմանը և ընդհանրապես հանրակրթական դպրոցում կրթադաստիարակչական ժամանակակից խնդիրների արդյունավետ լուծմանը:

Ատենախոսության ընդհանուր արժեքներից պետք է նշել այն հանգամանքը, որ այն ավարտուն, ամբողջական և ժամանակակից հնչեղություն ունեցող աշխատանք է, որում դրսևորվել են հեղինակի ինչպես մեթոդաբանական, մեթոդական, այնպես էլ հոգեբանամանկավարժական և իմաստասիրական գիտելիքները, գիտահետազոտական ինքնուրույն աշխատանք կատարելու ունակությունները:

Աշխատանքը անթերի տեսնելու միտումով նկատենք մի քանի բացթողումներ.

1. Պարզ չէ թե հեղինակը մասնավոր մեթոդիկաները դիտում է որպես մանկավարժական տեխնոլոգիաների բաղադրամաս, թե առանձին եզրույթ:
2. Գրականության ցանկում կան բացթողումներ, օգտագործված աշխատության վերջին էջի նշումների բացակայության տեսքով:
3. Աշխատանքը ընդհանուր առմամբ գրված է գրագետ հայերենով, սակայն նրանում հանդիպում են օտար այնպիսի բառեր, արտահայտություններ, որոնք հեշտությամբ կարող են փոխարինվել առավել դիպուկ իմաստը արտահայտող հայերեն հոմանիշներով /էջ 8,11,12,15,20,22,25,28,31,32,33,40,51,58,71 և այլն/:

   Նշված ու չնշված սխալներն ու բացերը մեծ մասամբ ունեն օբյեկտիվ պատճառներ, իսկ մյուս դիտողությունները ունեն մասնակի բնույթ և հեշտությամբ կարող են վերացվել աշխատանքի վերջնական խմբագրման ժամանակ:

Եզրակացություն

Նկատի առնելով, որ Ամալյա Գրիշայի Սահակյանի «**Կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացումը նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ**» խորագրով ատենախոսությանը ամբողջական և գիտական բարձր մակարդակով կատարված հետազոտություն է, որը լիովին բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի /ԺԳ.00.01 թվանիշով/ գիտական աստիճանին ներկայացվող

ժամանակակից պահանջներին՝ ՀՀ ԲԿԳԿԻ-ի գիտական աստիճանների շնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին: Միջնորդում ենք Խ.Աբովյանի անվան գիտական աստիճաններ շնորհող խորհրդի առջև հեղինակին շնորհելու իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս

ՄԳԴ, պրոֆեսոր,

ՌԴԿԱ ակադեմիկոս,

ՀՀ արվեստի վաստ. գործիչ՝ Լ.Ս.Ներսիսյան

Լ.Ս.Ներսիսյանի ստորագրությունը հաստատում եմ:

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական քարտուղար,

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Հ.Վ.Թադևոսյան

18.04.2026